

Գ. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՆԶՈՐԵՆՈՒ ԵՎ ՏԱՆԶԵՆՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՍՈՐՏԵՐԻ
ԱԳՐՈՔԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մոտակա տարիներում պտուղների և հատապտուղների արտադրության ընդարձակումը և ավելացումը հնարավորություն կտա բավարարելու ազգաբնակչության աճող պահանջմունքները և տարվա մեծ մասը նրանց ապահովելու թարմ պտուղներով: Դրան կարելի է հասնել գոյություն ունեցող այգիների բերքատվության բարձրացման և նոր այգիներ հիմնելու միջոցով:

Բերքատվության բարձրացման և պտուղների բարձրորակ լինելու համար անհրաժեշտ է, որպեսզի նոր հիմնվող այգիներում տեղադրվեն տվյալ գոտու հողակլիմայական պայմաններին հարմարված լավագույն սորտերի տնկիներով: Հայաստանի լեռնային շրջաններում (որտեղ նախկինում պտղաբուծություն համարյա գոյություն չուներ) պտղաբուծությունը գտնվում է զարգացման բուռն շրջանում և քանի որ տարածված կուլտուրաների ասորտիմենտը այնքան էլ հարուստ չէ, ապա անհրաժեշտ է այն լրացնել նոր լավագույն սորտերով: Սորտառումնասիրությունը հնարավորություն է տալիս գոյություն ունեցող բազմաթիվ և սելեկցիոն ճանապարհով ստեղծված նոր սորտերից ընտրել լավագույնները և այն տարածել արտադրության մեջ, որը կնպաստի լեռնային շրջանների պտղաբուծության հետագա զարգացմանը:

Սորտառումնասիրությունը տարվել է խնձորենու և տանձենու ժողովրդական ու ժամանակակից սելեկցիայի մի քանի սորտերի նկատմամբ, որոնք ղեռուս լրիվ ուսումնասիրված չեն: Որպես ստուգիչներ վերցված են ստանդարտ սորտիմենտի մեջ մտցված մի քանի սորտեր: Այդ նպատակով Լենինականի բարձրավանդակի պայ-

մաններում տարվել են մի քանի նոր տանձենու և խնձորենու սոր-
տերի ուսումնասիրություններ:

Ուսումնասիրվող տանձենու սորտերի ծառերը գտնվում են բեր-
քատվության սկզբնական շրջանում, իսկ խնձորենու սորտերինը՝
լրիվ ապրանքային բերքատվության շրջանում:

Բերքի որակական ցուցանիշները և ապրանքայնությունը

Պտղի հասունացման ժամկետը հանդիսանում է սորտի գլխա-
վոր առանձնահատկություններից մեկը, որը որոշ չափով պայմա-
նավորվում է նրա տարածումով և օգտագործման բնույթով: Ուստի
սորտերի ուսումնասիրության և նկարագրության ժամանակ նշելով
նրանց տնտեսական արժեքավոր հատկությունները, մեծ ուշադրու-
թյուն է դարձվում այդ հատկանիշի վրա:

Պտղի հասունացման ժամկետները պայմանավորված են ոչ
միայն սորտի առանձնահատկություններով, այլև նրա աճման միջա-
վայրի պայմաններով: Հատկապես մեծ է կլիմայի դերը: Սորտերը
հյուսիսից հարավ տեղափոխելով պտղի հասունացումը տեղի է
ունենում ավելի վաղ ժամկետում:

Լենինականի բարձրավանդակի պայմաններում ըստ պտղի հա-
սունացման ժամկետների, ուսումնասիրվող խնձորենու սորտերը
խմբավորվում են հետևյալ կերպ.

- | | |
|--------------------|--|
| 1. Վաղ ամառային | — Աստրախանի կարմիր: |
| 2. Ամառային սորտեր | — Պապիրովկա, Տիտովկա, Արկադ
ձմեռային: |
| 3. Աշնանային » | — Ռեբրիստոն, Ռենետ Ռեշետնի-
կովի, Օլեգ, Ֆլավա: |
| 4. Ձմեռային » | — Պեպին Չերենեկո, Բիսմարկ,
Բաբուշկինո, Կալվիլ անխի: |

Տանձենու սորտերը խմբավորվում են հետևյալ կերպ՝

- | | |
|--------------------|--|
| 1. Ամառային սորտեր | — Սուխումի դյուլես, Կզըլ-արմուդ,
Դժիր-նադրի, Բեսսեմյանկա: |
| 2. Աշնանային » | — Լեռնային գեղեցկուհի, Միշուրինի
հիշատակին, Բերե Ամանլի, Ան-
տառային գեղեցկուհի, Մալաչա: |
| 3. Ուշ աշնանային » | — Հեղինե, Լենինականի ուշահաս: |
| 4. Ձմեռային սորտեր | — Միշուրինի Բերե ձմեռային,
Կյուրդուկի: |

Խնձորենու սորտերի բերքի հաշվառման տվյալները 1962 թ.

Սորտի անվանումը	Նվաճողի անունը	Վերականգնողի անունը	Խա-Մումի անունը	Պարտիզանական զորքի անունը	Հավտարած թափու- կի քանակը			Ձեռք բերված քանակը	Խա-Մումի անունը	Պարտիզանական զորքի անունը	Վերականգնողի անունը	Պարտիզանական զորքի անունը	Պարտիզանական զորքի անունը
					Խա-Մումի անունը	Պարտիզանական զորքի անունը	Պարտիզանական զորքի անունը						
Աստորախանի կարմիր	1938	4	4,0	4,0	7,9	16,5	24,4	8/8	116,2	190,6	175,6	47,6	
Պապիրովկա	1939	5	3,0	3,0	11,8	18,0	29,8	10/8	40,6	70,3	57,1	14,0	
Տիտովկա	1938	6	4,0	4,0	6,9	22,9	29,8	14/8	108,6	138,4	113,3	23,0	
Ֆլավա	1939	5	4,0	4,0	16,3	37,3	53,6	12/9	159,5	213,1	136,5	42,6	
Ռեբրիստոն	1939	3	3,0	3,0	6,1	19,8	25,9	27/8	40,4	66,3	66,3	22,1	
Պեպին Չերենենկո	1938	4	4,0	4,0	5,2	12,5	17,7	17/9	151,2	168,9	145,6	42,2	
Բրամարկ	1938	5	5,0	4,0	4,5	13,2	17,7	15/9	185,2	203,2	140,6	50,7	
Կալվիլ անիսի	1938	3	4,0	3,0	5,5	14,0	19,4	29/9	80,0	99,4	99,4	33,1	
Ռենտ Ռեշենտիկովի	1939	3	4,0	4,0	5,2	15,2	20,4	3/9	114,3	124,7	124,7	41,5	
Արկադ ձմեռային	1938	4	3,0	2,0	2,8	4,5	7,3	17/8	33,3	40,6	37,9	10,1	
Օլեգ	1939	5	3,0	3,0	6,5	20,0	26,5	22/8	86,0	112,5	94,4	22,5	
Բարուշկինո		3	2,0	3,0	1,3	2,9	4,2	10/9	24,5	28,7	28,7	9,6	

Տանձնու սորերի բերի հաշվառման տվյալները 1962 թ.

Սորերի անվանումը	Միավորված տես. պայման	Վերականգնողական հատկություն	Խա-Մում միջակայական	Խա-Մում միջակայական	Հավաքած թափու- կի բանակը			Մեծ վերականգնողական	Խա-Վի մշակման բույսերի վերականգնողական	Մշակման պայմանները	Խա-Վի մշակման բույսերի վերականգնողական	Խա-Վի մշակման բույսերի վերականգնողական
					Խա-Մում միջակայական	Խա-Մում միջակայական	Խա-Մում միջակայական					
Հեռանային զեղեցիկուհի	1951	6	5,0	4,0	17,1	40,6	57,7	22/9	148,4	206,1	96,1	34,3
Միջուրինի հիշատակին	1951	5	5,0	4,0	11,2	19,1	30,3	22/9	70,0	100,3	56,9	20,0
Հեղինե	1951	5	5,0	4,0	19,7	20,1	39,8	25/9	139,1	178,9	112,7	35,8
Հենինականի ուշահաս	1951	5	5,0	3,0	35,2	28,0	63,2	20/9	25,5	89,7	62,8	18,0
Սուխուժի ղյուղի	1951	3	4,0	3,0	1,3	1,5	2,8	21/8	38,0	40,8	40,8	13,6
Կյու-արմուղ	1951	4	4,0	4,0	2,0	2,6	4,6	23/8	50,1	54,7	49,0	14,4
Դժիբ Նուգրի	1951	3	4,0	4,0	5,8	13,1	18,9	6/9	29,5	48,4	48,4	16,1
Բերե-Ամանի	1951	3	3,0	3,0	0,3	1,6	1,9	7/9	25,5	27,4	25,5	9,1
Անտառային զեղեցիկուհի	1951	3	5,0	4,0	11,5	13,7	25,2	8/9	51,5	76,7	76,7	25,5
Մալաշա	1951	3	4,0	2,0	2,5	3,7	6,2	13/9	8,5	14,7	14,7	5,0
Կյուրղուկի	1951	3	2,0	2,0	0,5	0,6	1,1	6/10	10,4	11,5	11,5	3,8
Միջուրինի բերե ձմեռային	1952	3	4,0	3,0	1,4	1,9	3,3	6/10	13,0	16,3	16,3	5,4
Բենսեմյանկա	1951	5	4,0	2,0	0,4	1,0	1,4	18/9	11,5	12,9	12,9	4,3

Քերֆաուլոյթյունը: Բերքատուլությունը բիոլոգիական և տնտեսական գլխավոր հատկութիւններից մեկն է, որի ցուցանիշով տրբվում է սորտի արտադրական գնահատականը, արժեքավորութիւնը:

Տարբեր սորտներից ստացված բերքը համեմատելու համար վերցվել է յուրաքանչյուր սորտի 3 ծառից ստացված բերքը: 1963 թվականին խիստ անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով ուսումնասիրվող խնձորենու և տանձենու սորտերի մի մասից բերք չստացվեց և այն սորտերը, որոնք պտղաբերեցին, ստացվեց շատ ցածր բերք: Հավաքած թափուկի և բերքի հաշվառման տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

Պտուղների որակական ցուցանիշները որոշելու համար ուսումնասիրվող սորտերի երեք ծառերից վերցվել է նմուշ, յուրաքանչյուր նմուշում 100 պտուղ և որոշվել յուրաքանչյուր նմուշի 100 պտղի քաշը, 10 խոշոր պտուղների միջին և ամենամեծ պտղի քաշը, ինչպես նաև պտուղների միատեսակութիւնը և ստանդարտ պտուղների քանակն ու քաշը:

Խնձորենու սորտերն ըստ ստանդարտ պտղի քանակի, տեղիսով արտահայտված, կարելի է խմբավորել հետևյալ ձևով.

- | | |
|--------------------------|---|
| 1-ին խումբ 500/0-ից ցածր | — Տիտովկա, Կալվիլ անխի: |
| 2-րդ խումբ 50—600/0 | — Պապիրովկա, Ֆլավա, Ռերբիստոն, Օլեգ, Բարուշկին: |
| 3-րդ խումբ 60—700/0 | — Աստրախանի կարմիր, Պեպին Չերնենկո, Արկադ ձմեռային: |
| 4-րդ խումբ 70—800/0 | — Բիսմարկ, Ռենետ Ռեշետնիկովի: |

Ըստ պտղի մեծութիւն

- | | |
|-------------------------|---|
| Միջինից ցածր՝ 50—75 գր. | — Արկադ ձմեռային, Ռենետ Ռեշետնիկովի, Պապիրովկա, Աստրախանի կարմիր, Ֆլավա, Բարուշկին: |
| Միջին՝ 75—100 գրամ | — Տիտովկա, Ռերբիստոն, Պեպին Չերնենկո, Կալվիլ անխի, Օլեգ, Բիսմարկ: |

Տանձենու սորտերն ըստ ստանդարտ պտուղների քանակի, արտահայտված տոկոսներով կլինեն՝

- | | |
|--------------------------|----------------------------|
| 1-ին խումբ 600/0-ից ցածր | — Կյուրդուկի: |
| 2-րդ խումբ 60—700/0 | — Միշուրինի Բերե ձմեռային: |

- 3-րդ խումբ 70—80% — Լեռնային գեղեցկուհի, Միշուրինի հիշատակին, Սուխումի դյուշես, Լենինականի ուշահաս, Բերե Ամանլի, Բեսսեմյանկա:
- 4-րդ խումբ 80—90% — Կղըլ արմուղ, Անտառային գեղեցկուհի, Հեղինե, Մալաշա, Դժիր-Նադրի:

Հատ պտղի մեծության

- Միջինից ցածր՝ 50—100 գր. — Կյուրդուկի, Դժիր Նադրի, Կղըլ արմուղ, Սուխումի դյուշես:
- Միջին՝ 100—150 գր. — Լեռնային գեղեցկուհի, Մալաշա, Բեսսեմյանկա, Բերե Ամանլի, Միշուրինի բերե ձմեռային, Անտառային գեղեցկուհի:
- Խոշոր՝ 200—300 գ — Միշուրինի հիշատակին:
- Միջինից բարձր՝ 150—200 գ — Լենինականի ուշահաս, Հեղինե:

Պտղի համի որոշումը: Պտղի համը որոշվել է համտեսի միջոցով, պտղի օպտիմալ հասունացման շրջանում: Սորտի տարբերիչ և տնտեսական արժեքավոր հատկանիշներից մեկը համարվում է պտղի համը: Վերցնենք ցանկացած սորտը, որքան էլ բարձր լինեն նրա մյուս հատկանիշները, եթե համը բարձր որակի չէ, այն չի կարող լայն տարածում ստանալ: Պտղի համը պայմանավորված է ոչ միայն քիմիական կազմով, այլև ֆիզիկական հատկություններով: Հիմնական նյութերը, որոնք որոշում են պտղի համը, շաքարներն են, թթուները և նրանց զուգորդումը, ինչպես նաև համի տարբերիչ անհատական երանգավորումները՝ բուրմունքը, տոնպոթյունը, զառնությունը և համի այլ հատկանիշներ: Պտղամսի թանձրությունը (կոնսիստենցիան) նույնպես մեծ դեր ունի պտղի որակական գնահատականը տալիս, որը լինում է խոշորահատիկ, մանրահատիկ, ալրային, նուրբ, հյութալի, չոր և այլ զուգակցումներով:

Դեզուստացիայի տվյալներով խնձորենու սորտերից բարձր գնահատականի (4,5 բալլ) են արժանացել Բիսմարկ, Պեսպին Չերենեկո սորտերը, ցածր գնահատականի՝ Յլավա (3,0), Օլեգ, Բարուկինո, Ռերրիստոն, Ռենետ Ռեշետնիկովի, Արկադ ձմեռային և Տիտովկա (3,5) սորտերը:

Տանձենու սորտերից բարձր գնահատականի (4,5 բալլ) արժանացել են Անտառային գեղեցկուհի, Հեղինե սորտերը, ցածր գնա-

Խնձորենո սոբաների Բիմիական կազմի 1962 թ. ավյալները

Սոբանի անվանումը	Երբ է կատարվում մեկ տարում	Չոր նյութեր	Շաբարներ			Պարբերական	Պարբերական	PH	Մանրամասն
			Միջոցառման նպատակը	Միջոցառման նպատակը	Միջոցառման նպատակը				
Օլեգ	16/10	10,2	7,3	6,38	0,98	0,61	1,125	3,55	
Բարուշկին	16/10	13,97	10,23	8,69	0,75	0,32	—	3,8	
Բեբրիտոն	15/9	12,7	7,7	6,71	0,99	0,86	—	3,15	
Ֆլավա	29/1	10,61	7,59	7,48	0,11	0,48	0,670	2,6	
Աստրախանի կարմիր	20/8	12,27	7,92	6,38	1,54	0,94	—	2,75	
Բենեա Բենեանիկովի	16/10	12,4	7,2	7,2	—	0,61	1,108	3,5	
Պեպին Չերենկո	29/1	10,01	7,92	6,82	1,1	0,40	0,290	2,7	
Արկադ ձմեռային	15/9	12,39	9,38	6,28	3,1	0,29	—	3,85	
Բիսմարկ	13/10	10,2	7,7	6,82	0,88	0,83	0,133	3,3	
Կալվի Անիսի	29/1	11,81	8,3	8,3	—	0,50	0,780	4,8	
Պասկրովկա	20/8	12,82	8,3	6,60	1,70	1,22	—	2,60	
Տիտովկա	15/9	10,99	6,82	6,82	—	0,61	—	3,45	

Տանձենու սորտերի ֆիմիական կազմի 1962 թ. տվյալները

Սորտի անվանումը	Վեգետացիայի և մեղրի քանակությունը	Մեղրի քանակությունը	Շաքարներ			Միջին քանակություն	Պիտանիություն	pH	Միջին քանակություն
			Միջին քանակություն	Միջին քանակություն	Միջին քանակություն				
Միջուրիների բերե ձմեռային	13/10	13,07	9,23	8,03	1,20	0,11	0,665	4,2	
Լեռնային գեղեցկուհի	9/10	12,99	10,68	8,3	2,38	0,05	0,141		
Հեղինե	9/10	14,74	9,69	9,69	—	0,053	0,690		
Լեռնակապույտ	1/10		8,58	7,28	1,30	0,1		—	—
Միջուրիների հիշատակին	9/10	13,24	9,23	8,13	1,10	0,080	0,856		
Բեսեմյանկա	15/9	14,59	8,30	7,2	1,1	0,09	—		
Սուխումի դյուշես	4/9	12,53	6,60	6,10	—	0,21	—	—	—
Կյուրդուկի	16/10	15,9	8,69	7,7	0,99	0,08	0,083		
Դժիլ Եսողբի	13/9	14,32	9,30	7,38	1,92	0,21	0,715		
Անտառային գեղեցկուհի	13/9	13,37	6,82	5,93	0,89	0,11	0,832	—	—
Բերե Ամանի	13/9	14,87	9,48	8,48	1,00	0,27	0,665		
Մալաչա	13/9	15,27	8,80	8,03	0,77	0,13	0,665		

Հատականի (3,0) Սուխումի դյուշես, Կյուրդուկի, Դժիր-Նադրի սոր-տերը:

Պտուղների բիմիական կազմը: Պտղի բիմիական կազմի միջոցով որոշվում և լրացվում են համը, սննդային արժանիքները և նրանց օգտագործման բնույթը: Պտղի բիմիական կազմը հիմնականում կախված է սորտից, աճման միջավայրի պայմաններից և պտղի հասունացման աստիճանից: Տարբեր գոտիներում տարբեր հասունացման ժամկետ ունենալու դեպքում, բիմիական կազմը հիմնական չի մնում (աղյուսակներ՝ 2, 2ա):

Պահունակությամբ որոշումը: Պահունակությունը որոշելու համար բնորոշել են առողջ, առաջին տեսակի պտուղներ (յուրաքանչյուր սորտից 100 պտուղ): Պահելու ընթացքում ստուգվել և նշվել է պտղի մաշկի գունավորման փոփոխությունը, սպառողական հասունացման սկիզբը, գերհասունացումը, թառամումը, փտումը և համի կորուստի սկիզբը: Պահունակության վերջին նշաններն են՝ պտուղների 10 տոկոսից բարձր մասսայական փտումը, համի կորուստը և թառամումը:

Ըստ պահունակության տևողության խնձորենու սորտերը խմբավորվում են հետևյալ հերթականությամբ՝ 20—40 օր՝ Պապիրովկա, Տիտովկա, Արկադ ձմեռային, Օլեգ, Աստրախանի կարմիր:

40—60 օր՝ Ռեբրիստոն, Ռենետ Ռեշետնիկովի:

60—100 օր՝ Բարուշկինո:

100—175 օր՝ Կավլիլ անիսի, Ֆլավա:

175—220 օր՝ Բիսմարկ, Պեպին Չերենեկո:

Տանձենու սորտերը խմբավորվում են՝

Մինչև 20 օր՝ Բեսսեմյանկա, Սուխումի դյուշես, Կյուրդուկի, Դժիր Նադրի, Մալաչա, Բերե Ամանլի, Կզլ արմուդ, Անտառային գեղեցկուհի:

Մինչև 50 օր՝ Լեոնային գեղեցկուհի, Միլուրինի հիշատակին:

Մինչև 70 օր՝ Լեոնականի ուշահաս, Հեղինե, Միլուրինի բերե ձմեռային:

Վնասատուների և եիվանդությունների ուսումնասիրությունը

Վնասատուները և հիվանդությունները մեծ վնաս են հասցնում ժողովրդական տնտեսությանը, նրանք ճնշում են ծառերի աճեցողությունը, իջեցնում բերքատվությունը և վնասում պտուղների ապրանքայնությունը: Հիվանդությունների և վնասատուների նկատ-

մամբ դիմացկունութիւնը միայն սորտային առանձնահատկութիւն չէ, այդ գործում մեծ դեր ունեն նաև աճման միջավայրի պայմանները, ծառերի վիճակը, հասակը և բույսերի անհատական առանձնահատկութիւնները:

Ցածր ագրոտեխնիկայի և բույսերի վատ վիճակի դեպքում, նրանց դիմացկունութիւնը հիվանդութիւնների և վնասատուների նկատմամբ ցածր է: Ուսումնասիրութիւն տվյալները ցույց են տալիս, որ խնձորենու հիմնական վնասատուներն են խնձորենու ցեցը, օղակավոր մետաքսագործը, պտղակերը, գորշ տիզը, խնձորենու կանաչ լվիճը, հիվանդութիւններից՝ տերևի և պտղի բոսը:

Տանձենու մոտ՝ պսիլան, խնձորենու կարմիր տիզը, տերևաուլը լվիճը, բալենու լորձնային սղոցողը, հիվանդութիւններից՝ տերևի և պտղի բոսը: Համեմատաբար վնասատուների և հիվանդութիւնների նկատմամբ իրենց դիմացկունութիւնը աչքի են բնկել խնձորենու՝ Օլեգ, Պեպին Զերնենկո սորտերը, իսկ տանձենուց՝ Լեռնային գեղեցկուրին և Մալաչան:

Սորտերի ագրոբիոլոգիական նկարագրությունը: Սորտերը տարբերվում են իրենց մորֆոլոգիական հատկանիշներով և ագրոբիոլոգիական առանձնահատկութիւններով: Սորտերը տարբերող աչքի բնկնող հատկանիշներ են ծառի սաղարթը, տերևները, ծաղիկները և պտուղները: Սորտային առանձնահատկութիւնների արտահայտման աստիճանը կախված է այն բանից, թե արտաքին պայմանները, ինչպես նաև կիրառվող ագրոտեխնիկան որքանով են համապատասխանում սորտի բնույթին: Արտաքին պայմանները ինչքան ավելի շատ են համապատասխանում սորտի պահանջներին, այնքան ավելի լավ են զարգանում նրան բնորոշող հատկանիշները և առանձնահատկութիւնները:

Խ Ն Զ Ո Ր Ե Ն Ի

Ա մ ա ո ա յ ի ն ս ո Ր տ ե ր: Աստրախանի կարմիր: Մի շարք պոմոլոգների կարծիքով սորտը ծագել է Աստրախանի շրջակայքից, որը և մոտ 150 տարի առաջ տարածվել է ամբողջ Ռուսաստանում և մեծ համբավ է ձեռք բերել, որպես կայուն, շահավետ ամառային սորտ: Ծառը միջին աճեցողությամբ է, խիտ ճյուղավորությամբ, կլորավուն սաղարթով, պտուղը միջին մեծության, տափակ կլորավուն ձևի: Պտղի մաշկը կանաչա-դեղնավուն է, հասուն շրջանում մանուշակա-կարմրավուն ինտենսիվ գունավորումով: Պտուղ-

ները հասունանում են օգոստոսի կեսերին, բերքատվությունը միջին կամ միջինից բարձր, վեգետացիան վերջանում է վաղ, լեռնային շրջաններում հանդիպում է մինչև 1500—2000 մետր բարձրության վրա: Մառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր է: Դիմացկունությունը քոսի նկատմամբ միջինից ցածր, պտղակերով քիչ է վնասվում: Պտուղները մյուս ամառային սորտերի նման շուտ ալյուրանման չեն դառնում, պահվում են 15—20 օր:

Սորտի արժանիքներ: Տեղի և հողի նկատմամբ պահանջկոտ չի, չորադիմացկուն է, վաղ և ամեն տարի պտղաբերող, պտղակերով թույլ է վարակվում, համեմատաբար լավ պահունակ, փոխադրադիմացկուն, զեղեցիկ և ինտենսիվ գունավորումով, բավական լավ համով:

Սորտի քերություններ: Որոշ շրջաններում երկարակեցությունը և բերքատվությունը ցածր, թեքում ունի դեպի պտուղների մանրացում:

Պայքրովա: Ամառային լավագույն սորտերից մեկն է, ծագումը հայտնի չէ, հայրենիքը համարում են Մերձբալթյան ռեսպուբլիկաները, որտեղ այս սորտը շատ տարածված է, ներկայումս լայն տարածում է ստացել ՍՍՌՄ-ի պտղաբուծական ամբողջ միջին գոտիներում, որոշ չափով հարավային մարզերում: Մառերի ցրտադիմացկունությունը բավականին բարձր, սաղարթը կտրավուն, միջին խտության: Պտղի մեծությունը միջին, կտրավուն կոնաձև, մաշկը բարակ, պինդ, կանաչա-դեղնավուն, լավ նկատելի սպիտակավուն ենթամաշկային կետերով: Պտուղը հասունանում է հուլիսի վերջերին, օգոստոսի սկզբներին, բերքատվությունը միջին, քաղի և սպառողական հասունացումը լինում է համարյա միաժամանակ, պտուղները կարելի է պահել 10—15 օր: Պտղի տեսքը գրավիչ է, լծոված լավ թարմացնող թթվա-քաղցր համով, նուրբ, հյութավի պտղամսով: Դերհասուն վիճակում պտուղները դառնում են ալյուրային, փոխադրադիմացկունությունը ցածր: Սորտը ինքնաանպտղաբեր է, լավագույն փոշոտիչներ են հանդիսանում Աստրախանի կարմիր, Ռենետ Ռեշետնիկովի սորտերը:

Սորտի արժանիքներ: Վաղ պտղաբերությունը, պտուղների վաղ հասունացումը և նրանց լավ որակը:

Քերություններ: Ցածր փոխադրադիմացկունությունը և պահունակությունը:

Տիտովա: Հնագույն ռուսական սորտ է, առաջին անգամ 150 տարի առաջ նկարագրել է Մ. Մ. Բուլոտովը, լայն տարածված է ամբողջ ՍՍՌՄ-ի միջին գոտում: Սորտի ցրտադիմացկունությունը

բարձր է, իրենց երկարակեցութեամբ ծառերը աչքի չեն ընկնում, քանի որ բնափայտը փութիւր է, շուտ կոտորվող: Սաղարթը կլորավուն կամ անկանոն, խտութեամբ նոսր է, պտուղը խոշոր է, լայն գլանաձև, երբեմն կողավորութեամբ, տեսքը գրավիչ է և մուգ կարմրավուն շերտավոր գունավորմամբ, համը միջակ է, պտղամիսը կուպիտ, քիչ հլուցալի, քաղցրա-թթվային համով: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ: Պտուղը հասունանում է օգոստոսի երկրորդ կեսերին, պահվում է 30—40 օր, պտղի հասունացումը տեղի է ունենում ոչ միաժամանակ: Բերքատվութեանը միջին, պտղի միացման ամրութեանը պտղաճյուղերին թույլ, փոխադրադիմացկունութեանը՝ միջին: Պտուղները արագ դառնում են ալրային և նեխվում են: Տերևները և պտուղները քոսով թույլ են վարակվում:

Սորտի արժանիքները: Բարձր ցրտադիմացկունութեան, պտղի արտաքին տեսքի գրավչականութեան:

Թերութեանը: Ժյուղերի հեշտութեամբ կոտորվելը և պտղի ցածր որակը:

Արկաղ ձմեռային (ստուգիչ): Սորտը ստացել է Ի. Վ. Միշուրինը 1901 թ. Նեղզվեցկի և Անտոնովկա սորտերի տրամախաշումից: Սերմից ստացված ծառը առաջին անգամ պտղաբերել է 1911 թ., ծառի աճեցողութեանը միջինից բարձր է, ճյուղավորութեանը միջին խտութեամբ, սաղարթը կիսագնդաձև: Պտուղը միջին մեծութեան է, կլորավուն կոնաձև, առանց կողավորութեան: Պտղամաշկը դեղին է, կարմրավուն շերտերով: Պտղի հասունացումը օգոստոսի երկրորդ կեսին, բերքատվութեանը բարձր է: Պտղամիսը սպիտակ է, հլուցալի, քաղցր, համը միջակ, համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ: Պտուղները պահվում են 20—30 օր, փոխադրադիմացկունութեանը բարձր չէ: Մառերի ցրտադիմացկունութեանը բարձր է, պտուղները և տերևները քոսով վնասվում են բավական ուժեղ:

Սորտի տարբերիչ հատկանիշները: Պտղի համը, պտուղների պահունակութեան տևողութեանը:

Ա շ ն ա ն ա յ ի ն ս ո Ր Տ Ե Ր: Օլեգ: Սորտն ստացել է Ի. Վ. Միշուրինը Սկրիժապել պուրպուրովի ազատ փոշոտումից ստացված լավագույն սերմնաբույսերից: Սերմնաբույսի առաջին պտղաբերութեանը եղել է 1904 թ., ծառի աճեցողութեանը միջին է, սաղարթը կիսագնդաձև, միջին խտութեան: Պտղի մեծութեանը միջինից բարձր է, ձևը տափակ- կլորավուն, պտղամաշկը միջին ամրութեան, կանաչադեղնավուն, հասուն շրջանում համարյա լրիվ ծածկված

գորշ ծիրանագույն գծիկներով, կողավորութունը թույլ է արտահայտված՝ միայն պտղի վերևի մասում:

Պտուղը հասունանում է օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում է 30—40 օր. բերքատվությունը միջին է, պտղամիսը սպիտակ է, փափուկ, թեթև հատիկային կառուցվածքով, թթվա-քաղցրավուն համով, համարվում է սեզանի երկրորդ կարգի սորտ: Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր, քոսի նկատմամբ միջին դիմացկունությամբ, պտղակերով թույլ է վնասվում:

Ռեբրիստոն: Ստացել է Ի. Վ. Միշուրինը 1913 թ. Սլավյանկա և Դանցիգի Ռեբրիստոն սորտերի տրամախառմից, առաջին պտղաբերությունը եղել է 1926 թ.: Ծառը ուժեղ աճեցողությամբ, սաղարթը ձվաձև, ճյուղավորման խտությունը միջին: Պտղի մեծությունը միջին կամ միջինից բարձր, ձևը տափակ-կլորավուն, լավ արտահայտված կողավորությամբ: Պտղամաշկը պինդ, կանաչ դեղնավուն, ծածկված մուգ կարմրավուն նրբագծերով: Պտղամիսը դեղնա-վարդագույն, խոշորահատիկ, թթվա-քաղցրավուն համով, համարվում է սեզանի երկրորդ կարգի սորտ: Պտուղը հասունանում է օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում է 40—50 օր, բերքատվությունը միջինից ցածր, ծառի ցրտադիմացկունությունը միջինից բարձր, կմախքային ճյուղերը բավական ուժեղ տուժում են արևահարությունից, քոսի նկատմամբ ունի միջին դիմացկունություն:

Ռենետ-Ռեշետնիկովի: Ի. Վ. Միշուրինի կողմից Ռենետ սորտի սերմերի ցանքի ընտրված երկրորդ գեներացիայի սերմնաբույս է: Ռենետ սորտը Ի. Վ. Ռեշետնիկովն ստացել է Կուլբիշևում. Սամարայի չափ Ռենետի սերմերի ցանքը կատարվել է 1902 թ., առաջին պտղաբերությունը եղել է 1914 թ., ծառի աճեցողությունը միջին. սաղարթը կիսագնդաձև, միջին խտության: Պտղի մեծությունը միջինից ցածր, ձևը տափակ-կլորավուն, պտղամաշկը կանաչա-դեղնավուն, հասուն ժամանակ ոսկյա-դեղնավուն, թույլ արտահայտված կարմրությամբ: Պտղամիսը սպիտակա-դեղնավուն, մանրահատիկ, հյութալիությունը միջին, թթվաքաղցր համով, համարվում է սեզանի երկրորդ կարգի սորտ: Պտուղը հասունանում է սեպտեմբերի առաջին կեսերին, պահվում է 40—50 օր, բերքատվությունը միջին: Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր, քոսի նկատմամբ դիմացկունությունը միջինից ցածր:

Ծառի առանձնահատկությունները: Ծրտադիմացկունությունը բարձր, ճյուղերը ճկուն, բնափայտը ամուր և թափուկը քիչ:

Ֆլավա: Ստացել է Ի. Վ. Միշուրինը 1903 թ.՝ Կիտայկա խնձորենու սերմերից, բեղմնավորված Թեննետ Բլենգեյմսկի սորտի փոշով, առաջին պտղաբերությունը եղել է 1917 թ.: Մառի աճեցողությունը ուժեղ, լայն ձվաձև սաղարթով, ճյուղավորությունը խիտ: Պտղի մեծությունը միջին, հոլած: Պտղամաշկը կանաչ-դեղնավուն, լրիվ հասուն ժամանակ վառ դեղնավուն: Պտղամիսը պինդ, կոպիտ, հյութալիությունը ցածր, թթվային համով: Պտղի հասունացումը սեպտեմբերի երկրորդ կեսերին, պահվում է մինչև մարտի կեսերը, համարվում է երկրորդ կարգի սորտ, բերքատվությունը միջինից բարձր:

Մառի առանձնահատկությունները: Յրտադրմացկունությունը բարձր, ճյուղերը ձկուն, պտուղների ամուր միացումը, թափուկը քիչ, դիմացկուն հիվանդությունների և վնասատուների նկատմամբ: Հողի նկատմամբ պահանջկոտ լինելը (նկ. 2):

Չմեռային սորտեր: Պեպին Չերենեկո: Այս արժեքավոր ձմեռային սորտը ստացել է Ս. Յ. Չերենեկոն, Չերնիգովի նահանգում 1904 թ.: Պեպինկա կիտովսկայա և Կալվիլ սնեժնի սորտերի տրամախաչումից: Մառի աճեցողությունը միջին է, սաղարթը գնդաձև, ճյուղավորման խտությունը միջին-նոսր: Պտղի մեծությունը միջինից բարձր է, ձվա-կոնաձև: Պտղամաշկը կանաչ-դեղնավուն, լրիվ հասուն ժամանակ վառ դեղին է (ժողտագույն), թույլ ողողված վարդա-կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ-դեղնավուն է, մանրահատիկ, միջին հյութալիությամբ, քաղցր, թեթև բուրմունքով: Պտուղը հասունանում է սեպտեմբերի կեսերին, սովորական պահեստային պայմաններում պահվում է մինչև մարտի վերջերը: Մառերի ջրտադրմացկունությունը բավական բարձր է: Տերևները և պտուղները դիմացկուն են քոսի նկատմամբ: Ըստ պտղի որակի և պահունակության տեղողության արժեքավոր սորտ է:

Սորտի տարբերիչ հատկանիշները՝ ձվա-կոնաձև պտուղը, ձազարը բավական նեղ ճառագայթաձև ժանգոտվածությամբ, բաժակը մեծ (նկ. 1):

Բիսմարկ: Սիդնեյում բուսաբան Մյուլլերը, անհայտ ծագում ունեցող սերմից այս սորտը ընտրել և տարածել է շնորհիվ պտղի լավ որակի: Մառը միջին աճեցողության է, սաղարթը կիսագնդաձև, ճյուղավորությունը խիտ: Պտղի մեծությունը միջին է, լայն կոնաձև: Պտղամաշկը կանաչ-դեղնավուն, լրիվ հասուն ժամանակ ողողված գինե-կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, հյութալի, ուժեղ բուրմունքով, դուրեկան թթվաքաղցրավուն համով, համարվում է առաջին կարգի սեղանի սորտ:


Պտուղը հասունանում է սեպտեմբերի կեսերին, պահունակության տևողությունը բարձր է, սովորական պտղապահպանությանում պահվում է մինչև մարտի վերջը, բերքատվությունը միջինից բարձր. ծառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր է, ճյուղերը ձկուն, պտուղները ամուր կպած նրանց, բոսի և պտղակերի նկատմամբ բավական դիմացկուն է:



Նկար 1

Բարուշկինո: Այս սորտն ունի ուսական ծագում, հայտնի է սովել քան 100 տարի, ամենից շատ տարածված է ՍՍՀՄ-ի կենտրոնական մարզերում: Ծառի աճեցողությունը միջին է, սաղարթը լայն կլորավուն է, նոսր: Պտղի մեծությունը միջին է, տափակ-կլորավուն: Պտղամաշկը պինդ է, հիմնական գույնը կանաչ, լրիվ հասուն ժամանակ բաց դեղնավուն, ծածկված թույլ կարմրավուն գույնով: Պտղամիսը սպիտակ, մանրահատիկ, հյութալիությունը թույլ, միջին բուրմունքով, թթվաքաղցրավուն, թեթև թնդահամուշյամբ: Պտուղը հասունանում է սեպտեմբերի կեսերին, պահվում է

մինչև հունվարի վերջերը, բերքատվությունը միջին: Մառի ցրտա-
դիմացկունությունը բավական բարձր, պտուղները ամուր կպած
ճյուղերին, բայց հասունացման շրջանում ուժեղ թափվում են: Քոսի
նկատմամբ ունի միջին դիմացկունություն, համարվում է սեղանի
երկրորդ կարգի սորտ:



Նկար 2

Սառուի արժանիքները: Պտուղների պահունակության տևողու-
թյունը բավական բարձր, պտղի համը բավարար, փոխադրադի-
մացկուն:

Թերությունները: Մառերը պտղաբերության շրջանը ուշ են
մտնում:

Կալվիլ անիսի (ստուգիչ): Սորտն ստացել է Ի. Վ. Միչուրինը
Անիս բարխատնի և Կալվիլ ձմեռային սորտերի տրամախաշումից,
ընտրված սերմնաբույսի առաջին պտղաբերությունը եղել է 1920 թ.,
այս սորտը ղեռնա քիչ տարածում ունի: Մառի աճեցողությունը
միջինից բարձր է, սաղարթը կլորավուն է, ճյուղավորությունը խիտ:
Պտուղը միջին մեծության է, լայն կոնաձև, լավ արտահայտված
նեղ կողերով: Պտղամաշկը պինդ է, կանաչ-դեղնավուն, հասունաց-

ման շրջանում ծածկված գեղեցիկ, վառ կարմրավուն գույնով: Պրտ-
ղամիսը սպիտակ է, մանրահատիկ, միջին հյութալիությամբ, թթվա-
քաղցր, ուժեղ արոմատով: Պտուղները հասունանում են սեպտեմ-
բերի վերջին տասնօրյակում, պահվում են մինչև մարտի կեսերը,
բերքատվությունը միջին: Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր
է, քոսի և պտղակերի նկատմամբ դիմացկունությունը միջինից
ցածր:

Սորտի տարբերիչ հատկանիշները: Տերևները բաց կանաչավուն,
խոշորասղոցանման եզրերով, պտուղները լայն կոնաձև, համարյա
լրիվ ծածկված կարմրագույն գունավորումով, լավ արտահայտված
նեղ կողերով: Պտղաբերում է հիմնականում պտղաճյուղիկների
վրա:

Տ Ա Ն Ձ Ե Ն Ի

Ա մ առ ա յ ի ն ս ո Ր տ ե Ր: Սուխումի դյուշես: Այս սորտի
ծագման մասին ճիշտ տվյալներ չկան, գրականության մեջ տար-
բեր կարծիքներ կան. ըստ ոմանց Ղրիմի սորտ է: Կուլտուրական
սորտի պատահական սերմաբույս է, շրջանացված է Կրասնոսնով
(Արխադական ՍՍՀ-ում):

Երիտասարդ ծառերի աճը թույլ է, բայց հետագայում հասնում
է զգալի չափերի, սաղարթը բրգաձև է, ճյուղավորման խտությունը
միջին, պտղի մեծությունը միջինից ցածր, զանգակաձև: Պտղամաշ-
կը միջին ամրության է, սկզբում գորշ կանաչավուն, հասունացման
ժամանակ դեղնավուն: Պտղամիսը բաց դեղնագույն է, խոշորա-
հատիկ, հյութալի, քաղցր, թույլ թթվությամբ և տափալիքային:
Ծառերի բերքատվությունը միջին է, պտուղը հասունանում է օգոս-
տոսի կեսերին, պահվում է մինչև երկու շաբաթ, ծառերի ցրտադի-
մացկունությունը բավական բարձր է, պտուղները ճյուղերին ամուր
կպած, դիմացկուն է սնկային հիվանդությունների նկատմամբ, հա-
մարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ:

Սորտի արժանիքները: Հողային պայմանների և խնամքի
նկատմամբ քիչ է պահանջկոտ, պտուղները հասունանում են վաղ
ժամկետում:

Թերությունները: Պտուղների ոչ բավարար համր:

Կըըլ արմուղ: Ծառի աճեցողությունը միջին է, սաղարթը լայն
բրգաձև, խտությունը նոսր: Պտղի մեծությունը միջինից ցածր է,
կլորավուն-ձվաձև: Պտղամաշկը միջին ամրության է, հիմնական
գույնը կանաչավուն, հասուն ժամանակ ծածկված դինեկարմրավուն

գույնով: Պտղամիսը սպիտակավուն է, մանրահատիկ, միջին հյութալիությամբ, քաղցրաթթվային համով: Ծառերի բերքատվությունը միջին, պտուղները հասունանում են օգոստոսի վերջերին, պահվում են մինչև երկու շաբաթ, ծառերի ցրտադիմացկունությունը բարձր, պտուղը ճյուղին ամուր կպած, բավական դիմացկուն սնկային հիվանդությունների նկատմամբ: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ:



Նկար 3

Ջիր Նադրի: Ժողովրդական սելեկցիայի հնագույն աղբյուրական սորտ է: Կայն տարածված է հանրապետության ցածրադիր և նախալեռնային շրջաններում: Ծառի աճեցողությունը բավական ուժեղ է, լայն բրգաձև, ճյուղավորման խտությունը միջին:

Պտուղը փոքր է, երկարավուն շշատանձաձև, պտղամաշկը պինդ է, կանաչադեղնավուն, հասուն ժամանակ դեղին նարնջակարմրավուն դունավորումով: Պտղամիսը սպիտակ է, պինդ, հյութալիությունը միջին, առանց քարային հատիկների, համը քաղցր է, թույլ թթվությամբ, առանց բուրմունքի, ծառերի բերքատվությունը միջինից բարձր է, պտուղները հասունանում են օգոստոսի վերջերին:

սեպտեմբերի սկզբներին, պահվում են մինչև երեք շաբաթ, ծառերի ցրտադիմացկունությունը բավական ցածր է, պտուղը ճյուղին ոչ այնքան ամուր կպած, դիմացկուն է սնկային հիվանդությունների նկատմամբ, համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ:

Սորտի արժանիքները: Ծառերը երկարակյաց են, բերքատվությունը բավական բարձր է, ստացվում են լավ որակի շոր պտուղներ:

Թևուրյունները: Պտուղների մանրությունը:

Բեսսեմյանկա (ստուգիչ): Հնագույն ռուսական սորտ է, հավանաբար բազմամյա ժողովրդական սելեկցիայի արդյունք, ամենաշատ տարածված սորտն է ՍՍՀՄ-ի միջին գոտում: Բեսսեմյանկա անունն ստացել է պտուղների մեծ մասի մեջ սերմերի բացակայության պատճառով, ծառերի աճեցողությունը միջինից բարձր է, սաղարթը լայն բրգաձև, խտությունը նոսր: Պտուղները միջինից ցածր են, կարճ տանձաձև: Պտղամաշկը պինդ, կանաչ, հասուն ժամանակ ոսկյա դեղնավուն, կարմիրդարձնագույն թշիկով: Պտղամիսը դեղնավուն, խոշորահատիկ, հյութալի, կիսահալչող, թեթև թնդահամուքյամբ, քաղցր համով: Ծառերի բերքատվությունը միջին է, պտուղը հասունանում է օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում է մինչև 10 օր: Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր է, պտուղը ճյուղին ամուր կպած, դիմացկուն է սնկային հիվանդությունների նկատմամբ:

Ա Շ Ն Ա Ն Ա Յ Ի Ն Ս Ո Ր Տ Ե Ր

Առնային գեղեցկումի: Այս սորտը ստացվել է Լենինականում, Պ. Գ. Կարանյանի կողմից՝ Անտառային գեղեցկուհի և Միչուրինի բերե ձևնային սորտերի տրամախաշումից: Շրջանացված է Հայաստանի լեռնային գոտում, ծառը միջին աճեցողության է, սաղարթը բրգաձև, ճյուղավորությունը խիտ: Պտղի մեծությունը միջին, կլորավուն կամ կարճ տանձաձև: Պտղամաշկը բարակ, միջին ամրության, հիմնական գույնը դեղին, հասուն ժամանակ դեղնաոսկեգույն, մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ, մանրահատիկ, առանց քարային բջիջների, հյութալի, քաղցրաթթվային ղեսերտային համով: Ծառերի բերքատվությունը միջինից բարձր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի կեսերին, պահվում են 40—50 օր:

Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր է, պտղի միացման ամրությունը ճյուղին միջին, դիմացկուն սնկային հիվանդություն-

ների նկատմամբ: Լավագույն փոշոտիչներ են հանդիսանում Միշուրինի հիշատակին, Անտառային գեղեցկուհի և Ղաբաղ արմուգ սորտերը:

Սարաի արժանիքները: Ծառերի բարձր ցրտադիմացկունությունը:

Սարաի բերութունները: Պտուղների ոչ երկարատև պահույնականությունը:

Միշուրինի հիշատակին: Ստացել է Պ. Գ. Կարանյանը՝ Անտառային գեղեցկուհի և Միշուրինի բերե՝ ձմեռային սորտերի տրամախաշումից, շրջանացված է Հայաստանի լեռնային գոտում: Ծառը ուժեղ աճեցողությամբ է, սաղարթը նեղ բրգաձև, խտությունը միջին, պտղի մեծությունը միջինից բարձր, հակառակ ձվաձև, կամ բութ տանձաձև: Պտղամաշկը միջին ամրության է, դեղնականաչավուն, հասուն շրջանում բաց դեղնավուն, մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, խոշորահատիկ, հալչող, հյութալի, մուշկային բուրմունքով, քաղցրավուն համով, ծառերի բերքատրվությունը միջին է, պտուղը հասունանում է սեպտեմբերի վերջերին, պահվում է 40—50 օր:

Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր է, պտղի միացման ամրությունը ծառին՝ միջին, դիմացկուն սնկային հիվանդությունների նկատմամբ: Լավագույն փոշոտիչ են՝ լեռնային գեղեցկուհի, Հեղինե, Լենինականի ուշահաս, Բեսսեմյանկա, Անտառային գեղեցկուհի, Սուխումի դուշեա սորտերը:

Սարաի արժանիքները: Ծառերի բարձր ցրտադիմացկունությունը և պտղի լավ համը (նկ. 4):

Բերե Ամանլի: Այս սորտը պատահական սերմնաբույս է, որը գտնվել է Արևմտյան Եվրոպայում, մոտավորապես 1826 թ.: ՍՍՀՄ-ում տարածված է քիչ, հաճախ կարելի է հանդիպել Հյուսիսային Օսեթիայում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի նախալեռնային մասերում:

Ծառերի աճեցողությունը բավական ուժեղ է, սաղարթը անկանոն, նոսր, կախ ընկած ճյուղերով: Պտուղը տանձաձև, մեծությունը միջինից բարձր, պտղամաշկը պինդ է, դեղնականաչավուն, հասուն ժամանակ ոսկյա դեղնավուն, ծածկված կարմրադարչնագույն գունավորումով: Պտղամիսը դեղնասպիտակավուն է, մանրահատիկ, նուրբ, հյութալի, բուրմունքը միջին, թթվաքաղցրավուն համով:

Ծառերի բերքատրվությունը միջին է, պտուղը հասունանում է սեպտեմբերի առաջին տասնօրյակում, պահվում է մինչև երկու շաբաթ: Ծառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր է:

պտուղը ճյուղին ամուր կպած, դիմացկուն է սնկային հիվանդությունների և պտղակերի նկատմամբ: Լավագույն փոշոտիչներ են հանդիսանում Հեղինե, Սուխումի դյուշես, Կզլ արմուղ, Անտառային գեղեցկուհի սորտերը:



Սորտի արժանիքներ: Մառերը առողջ են և երկարակյաց, բերքատվությունը բավական բարձր, պտղի համը լավ:

Թերություններ: Պտղի համը կայուն չէ, անբարենպաստ պայմաններում խիստ վատանում է:

Մ ա լ ա չ ա: Ժողովրդական սելեկցիայի հնագույն հայկական սորտ է, լայն տարածված է Հայաստանի ցածրադիր գոտիներում, Աղբբեջանի Նախիջևանի շրջանում և մասամբ Վրացական ՍՍՀ-ում: Մառը միջին աճեցողությամբ է, սաղարթը լայն բրդաձև, ճյուղավորման խտությունը միջին: Պտուղը շատ անձաձև, մեծությունը միջին: Պտղամաշկը ամուր է, գեղնականաշավուն, հասուն շրջանում դեղնառակեղույն, արևի կողմում թույլ գունավորումով: Պտղամիսը դեղնավուն է, նուրբ, հյութալի, չուղային, հալչող, քաղցր, բուրմունքով, հիանալի դեքսերտային համով: Մառերի բերքատվությունը

բարձրավանդակի պայմաններում միջակից ցածր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի առաջին կեսերին, պահվում են 15, 20 օր: Մառերի ցրտադիմացկունությունը միջին է, պտղի միացման ամրությունը ծառին՝ միջին, դիմացկուն է սնկային հիվանդությունների նկատմամբ:

Սորտի արժանիքները: Պտուղների դեսերտային լավ համը:

Թերությունները: Մառերի ցածր ցրտադիմացկունությունը, պտուղների կարճ պահունակությունը:

Անտառային գեղեցկունի (ստուգիշ): Պատահական սերմնաբույս է, գտնված Բելգիայում՝ XIX դարի սկզբներին, լայնորեն տարածված է արևմտյան Եվրոպայում, հյուսիսային Ամերիկայում: ՍՍՀՄ-ում տարածված է Հարավային շրջաններում բարձր ցրտադիմացկուն սորտերից է: Մառերի աճեցողությունն ուժեղ, սաղարթը լայն բրդաձև, ճյուղավորման խտությունը միջին: Պտղի մեծությունը միջինից բարձր՝ ձվատանձաձև: Պտղամաշկը բարակ է, պինդ, կանաչադեղնավուն, հասուն շրջանում ոսկյա դեղնավուն, վառ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը դեղնասպիտակավուն է, մանրահատիկ, հյութալի, յուղանման, բազր, հիանալի դեսերտային համով, ուժեղ բուրմունքով: Մառերի բերքատվությունը բարձր է, պտղի հասունացումը սեպտեմբերի առաջին կեսերին, պտղի միացման ամրությունը ծառին միջինից ցածր, պահվում է 2—3 շաբաթ: Ժամանակին հավաքելու դեպքում (հասունացումից 10 օր առաջ) դիմանում է տեղափոխումներին, հիմնականում օգտագործվում է թարմ վիճակում: Մառերի ցրտադիմացկունությունը բարձր է, հողի նկատմամբ պահանջկոտ չէ, բայց լավ է գնում բերրի, փոխք հողերում: Մի շարք դրական հատկանիշներից բացի ունի բարձր ցրտադիմացկունություն, բերքատվություն, պտղի գերազանց համի հատկություններ: Այս սորտն ունի էական երկու թերություն՝ պտղի և տերևների շատ ուժեղ վնասվածությունը քոսով և պտուղների հեշտությամբ թափվելը:

Ուշ աշնանային սորտեր: Հեղինե: Սորտը ստացել է Պ. Գ. Կարանյանը՝ Անտառային գեղեցկունի և Միլուբինի բերն ձմեռային սորտերի տրամախաչումից: Շրջանացված է Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում, միաժամանակ սորտի նկատմամբ տարբեր միկրոգոտիներում տարվում են արտադրական փորձարկումներ:

Մառերի աճեցողությունը միջին, լայն կլորավուն սաղարթով, մասամբ կախ ընկած ճյուղերով: Պտուղը կլորավուն է կամ բութ տանձաձև, միջինից բարձր, լայն: Պտղամաշկը պինդ,

կանաչադեղնավուն, հասուն շրջանում մուգ կարմրավուն ծածկութիւնով, որը զբաղեցնում է պտղի կեսը: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, հյութալի, յուղալին, միջին բուրմունքով, թթվաքաղցրավուն, դեաներտալին համով: Մառերի բերքատուությունը բարձր է, պտղի հասունացումը սեպտեմբերի վերջին տասնօրյակում, պահւում է 60—70 օր: Հիմնականում օգտագործում են թարմ վիճակում, պտղի միացման ամրութիւնը ծառին միջինից բարձր: Մառերի ցրտադիմացկունութիւնը բարձր է, լավ է տանում ջերմաստիճանի տատանումները, որը բնորոշ է լեռնային շրջաններին: Սնկային հիւվանդութիւնների և պտղակերի նկատմամբ դիմացկուն է: Լավագույն փոշոտիչներ են լենինականի ուշահաս, Միշուրինի հիշատակին, Անտառային գեղեցկուհի սորտերը:

Սուրաի արժանիքները: Պտղի դեաներտալին համը, ծառերի բարձր ցրտադիմացկունութիւնը և դիմացկունութիւնը ջերմաստիճանի տատանումների նկատմամբ (նկ. 3):

Լենինականի ուշահաս: Ստացել է Պ. Գ. Կարանյանը՝ Անտառային գեղեցկուհի և Միշուրինի Բերե ձմեռային սորտերի տրամախաշումից, շրջանացված է Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում: Մառերի աճեցողութիւնը ուժեղ է, սաղարթը՝ բրգաձև, ճյուղավորման խտութիւնը միջին: Պտուղը կլորավուն, խոշոր: Պտղամաշկը կանաչադեղնավուն, հասուն ժամանակ դունավորումով, պտղամիսը սպիտակ է, նուրբ, յուղալին, հյութալի, միջին բուրմունքով, քաղցրավուն, դեաներտալին համով: Մառերի բերքատուութիւնը միջինից բարձր է, պտղի հասունացումը սեպտեմբերի վերջին տասնամյակում, պտղի միացման ամրութիւնը ճյուղին միջինից ցածր, պտուղները պահւում են 60—70 օր, հիմնականում օգտագործվում են թարմ վիճակում: Մառերի ցրտադիմացկունութիւնը բարձր է, լավ է տանում ջերմաստիճանի տատանումները, սնկային հիւվանդութիւնների նկատմամբ դիմացկուն է, իսկ պտղակերի նկատմամբ՝ միջին դիմացկունութեամբ:

Լավագույն փոշոտիչներ են հանդիսանում Հեղինե, Միշուրինի հիշատակին, Կղւ արմուղ սորտերը:

Ձ մ ե ո ա յ ի ն ս ո Ր տ ե ր: Կուրգուկի: Ադրբեջանական ժողովրդական սելեկցիայի սորտ է, ծառերի աճեցողութիւնը միջին է, սաղարթը կլորավուն է, բրգաձև, նոսր: Պտուղը ձվաձև է, փոքր, պտղամաշկը պինդ է, կանաչավուն, հասուն շրջանում կանաչ դեղնավուն: Պտղամիսը սպիտակ է, խոշորահատիկ, հյութալիութիւնը թույլ, թույլ բուրմունքով ու քաղցրավուն համով: Մառերի բերքատուութիւնը միջինից ցածր է, պտուղները հասունանում են հոկ-

տեմբերի առաջին տասնօրյակում, պտղի միացման ամբողջությունը ծառին՝ ուժեղ է, պահվում են 10—20 օր: Ծառերի ցրտադիմացկունությունը բավականին բարձր է: Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է:

Միշուրին բերե ձմեռային (ստուգիչ): Ստացել է Ի. Վ. Միշուրինը՝ Ուսուրիական տանձենու սերմնաբույսը ծաղկման առաջին տարում խաչասերելով հարավային Ռուսլ սորտով: Ստացված սորտը իր մեջ զգալիորեն համատեղել է ծնողների լիարժեք հատկանիշները:

Ծառերի աճեցողությունը միջինից բարձր է, սաղարթը՝ լայն, բրգաձև, նոսր, որոշ չափով կախ ընկած ճյուղերով: Պտուղը միջին մեծությամբ, կարճ տանձաձև, պտղամաշկը պինդ է, բաց կանաչավուն, հասուն շրջանում՝ գորշ, մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, խոշորահատիկ, կիսահալչող, հյութալի, տալիս, բուրմունքը թույլ, դինեքաղցրավուն համով: Ծառերի բերքատվությունը միջինից բարձր է, պտուղը հասունանում է հոկտեմբերի առաջին տասնօրյակում, պտղի միացման ամբողջությունը ճյուղին՝ բարձր է: Պտուղը պահվում է 30—40 օր, ծառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր է, բունը համեմատաբար թույլ դիմացկունություն ունի: Պտուղները քիչ են վարակվում քոսով և պտղակերով: Համի հատկանիշները շատ փոփոխական են, կապված են տարվա օդերևութաբանական, ինչպես նաև հողային պայմաններից, որոշ տարիներ ստացվում են բարձր որակի խոշոր պտուղներ, իսկ երբեմն էլ պտուղները լինում են մանր, անհամ, տալիս, պտղամիսը կոպիտ, մեծ քանակի քարային բջիջներով:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բերքատվությունը հանդիսանում է սորտի բիոլոգիական և տնտեսական գլխավոր հատկություններից մեկը, որի ցուցանիշով տրվում է սորտի արտադրական գնահատականը, արժեքավորությունը: Ըստ որում այդ հատկությունը կարող է լրիվ հանդես գալ բարձր ագրոտեխնիկայի և այլ բարենպաստ պայմանների առկայության դեպքում: 1963 թ. խիստ անբարենպաստ կլիմայական պայմանների և կարկտահարության պատճառով ուսումնասիրվող խնձորենու և տանձենու սորտերի մի մասը չպտղաբերեց, իսկ այն սորտերը, որոնք պտղաբերեցին, ստացվեց ցածր բերք, որը բացատրվում է հետևյալ պատճառներով.

1. Խնձորենու Աստրախանի կարմիր, Պեպին Չերենեկո, Բիս-

մարկ սորտերի ծառերից 1962 թ. ստացվեց բարձր բերք, իսկ 1963 թ. այդ սորտերի ծառերից (որոնց ծաղկման ուժը եղել է 0—1,0 բալլ) բերք չստացվեց, նրանց մոտ արտահայտվեց պտղաբերության պարբերականությունը: Բերք չստացվեց նաև տանձենու, Սուխումի դյուշես, Մալաչա և Կուրդյուկի սորտերից, որոնց ծաղկման ուժը եղել է 0—2,0 բալլ:

Այն սորտերը, որոնց ծաղկման ուժը եղել է 3—5,0 բալլ, նրանց չպտղաբերելը բացատրվում է ծաղկման շրջանի երկարատև ցածր ջերմաստիճանով (օդի միջին ջերմաստիճանը այդ շրջանում եղել է 11,0), անբնորոշ տեղացող անձրևներով և օդի բարձր խոնավությունը, որոնք ուղղակի կամ անուղղակի պատճառ դարձան ցածր պտղակալման կամ որոշ սորտերի անբերրիության:

2. Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խնձորենու սորտերի պտուղների պահույնավորության տեղումնությունը տատանվում է 10—22 օրվա միջև: Շատ վաղ, հուլիսի կեսերին հասունանում են Աստրախանի կարմիր, Պապիրովկա սորտերի պտուղները, ուշ հասունացող սորտերի թվին են պատկանում Բիսմարկ և Պեպին Չերենկո սորտերը, որոնց պտուղները սովորական պտղապահեստարաններում պահվում են մինչև ապրիլ ամիսը:

Տանձենու սորտերից վաղ հասունանում են Սուխումի դյուշես և Կզլ արմուղ սորտերը: Ուշ հասունացող սորտերից են Հեդինեն և Լենինականի ուշահաս սորտերը: Ուսումնասիրության երկու տարվա տվյալների հիման վրա իրենց համային հատկանիշներով աչքի են ընկել խնձորենու Աստրախանի կարմիր, Պապիրովկա, Բիսմարկ, Պեպին Չերենկո, իսկ տանձենու սորտերից Հեդինեն, Լենինականի ուշահաս, Լեոնային գեղեցկուհի և Բերե Ամանլի սորտերը, որոնց կարելի է երաշխավորել լեոնային գոտու շրջաններում շրջանացնելու և սորտիմենտը լրացնելու այդ սորտերով:

3. Խնձորենու և տանձենու սորտերի վարակվածությունը հիվանդություններով և վնասվածությունը վնասատուներից կախված է սորտային հատկություններից, կլիմայական պայմաններից, ագրոտեխնիկայից և ծառի անհատական առանձնահատկություններից:

Բաձրավանդակի պայմաններում խնձորենու հիվանդություններից արտահայտվում են բոսք և թույլ ձևով ալրացողը (Ռենետ Ռեշետնիկովի սորտը), իսկ վնասատուներից՝ պտղակերը, խնձորենու ցեցը, օղակավոր մետաքսագործը, կանաչ լվիճը, գորշ տիզը: տիզը, տանձենու հիվանդություններից՝ բոսք, վնասատուներից՝ պտղակերը, պսիլան, խնձորենու կարմիր տիզը և տերևաողոր լվիճը: Քոսի տարածման աստիճանը կախված է տեղումների քանա-

կից և ապրիլ, մայիս ամիսների ջերմությունից: Այսպես, 1963 թ. առատ տեղումների և օդի բարձր խոնավության պայմաններում բոս Հիվանդությունը բավական ուժեղ արտահայտվեց, որը զգալի վնաս պատճառեց ծառերին: Հատկապես շատ տուժեցին Աստրախանի կարմիր, Արկադ ձմեռային և Ռենետ Ռեշետնիկովի սորտերը, տանձենու սորտերից՝ Անտառային գեղեցկուհի սորտը: Հիվանդությունների և վնասատուների նկատմամբ իրենց համեմատական դիմացկունությունից աչքի են ընկել խնձորենու Օլիգ, Պեպին Չեր-նենկո և տանձենու Լենային գեղեցկուհի ու Մալաշա սորտերը:

Г. Г. ОГАНЕСЯН

АГРОБИОЛОГИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ НЕКОТОРЫХ НОВЫХ СОРТОВ ЯБЛОНИ И ГРУШИ В УСЛОВИЯХ ЛЕНИНАКАНА

В работе приводятся результаты агробиологических исследований некоторых новых сортов яблони и груши.

В процессе изучения освещались вопросы сроков созревания плодов, урожайности, вкусовые достоинства, химического состава и лежкости.

Срок созревания плодов является важной биологической особенностью сорта, определяет распространение и характер использования сорта. По данным изучения сроков созревания сорта подразделяются на летние, осенние и зимние.

Урожайность является одним из главных биологических и хозяйственных качеств, определяющих производственную ценность сортов. Среди изучаемых сортов по урожайности отличались: из яблонь—Астраханское красное, Пепин Черненко, Бисмарк; из груш—Елена, Горная красавица.

По данным изучения, длительность лежкости сортов яблони колеблется от 10—220 дней. В обыкновенных плодохранилищах плоды яблок сортов Бисмарк, Пепин Черненко хранятся до апреля, а из груш—70 дней хранились плоды сортов Елена, Ленинанская поздняя. По предварительным данным, по показателям хозяйственно-полезных признаков отличались сорта яблони—Астраханское красное, Папировка, Бисмарк и Пепин Черненко; сорта груши—Елена, Ленинанская позд-

ния, Горная красавица и Бере-Аманли, которыми можно заменить или пополнить стандартный сортимент высокогорных зон плодово—ягодных культур.

По данным учетов поражения болезнями и повреждения сельскохозяйственными вредителями установлено, что среди изучаемых сортов яблони поражаемость грибом парши (*Verticillium perita*) значительно больше наблюдалась у Астраханского красного, Аркада зимнего, Ренета Решетникова; из сортов груши—Лесная красавица. Из вредителей были обнаружены плодоярка (*Carposcapa pomonella*), яблонная моль (*Hyponomeuta malinella*), кольчатый шелкопряд (*Malacosoma neustria*), бурый плодовой клещ (*Bryobia redikorzevi*), зеленая яблонная тля (*Aphis pomi* Dap.), а на сортах груши медяница (*Psylla piricola*), грушевая тлялистокрутка (*Jegabura reaumuri* Mordv.).

Небольшая поражаемость плодояркой была обнаружена у сортов: Ренет Решетникова, Бисмарк и Астраханское красное; значительно сильнее у сортов: Флава, Титовка, Кальвиль анисовый. Бурым плодовым клещиком заражены все сорта яблони, относительно слабо—Олег и Кальвиль анисовый.

Учеты на сортах груши показали, что медяница гораздо больше повреждает Джирнадри и Кэл армуд.

ЛИТЕРАТУРА

- Коллектив авторов под общей редакцией, Венямина А. Н.—Сорта плодовых и ягодных культур. Гос. сельхозгиз, Москва, 1953
- Мичурин И. В.—Сочинения, том II. Помологические описания. Гос. издат. сельхоз. Литературы. Москва, 1948.
- Коллектив авторов.—Груша. Гос. изд. сельхоз. лит. Москва, 1960.
- Нестеров Я. С.—Биологические особенности и селекция яблони в условиях Северного Кавказа. Воронежское книжное издательство, 1962.
- Пашкевич В. В.—Сортоизучение и сортоводство плодовых деревьев. Гос. сельхозгиз, Москва, 1933.

